ՆԱԽԱԳԻԾ 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

___ փետրվարի 2011 թվականի N ___ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2317-Ն ԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 110-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ընտանիքների անապահովության գնահատման և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ամրագրված անհատական տվյալների պաշտպանության, փոփոխությունների կատարման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջև անհատական տվյալների փոխանակման կարգերը հաստատելու մասին» N 2317-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի.

ա. 3-րդ կետի երկրորդ և երրորդ պարբերությունները շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընտանիքի՝ գտնվելու վայրում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող անդամը սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում հաշվառվում է որպես ընտանիքի «բացակա» անդամ, եթե առկա է գործակալության և սոցիալական աջակցության խորհրդի ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելության արձանագրությունը:

«Բացակա» լրացրած ընտանիքի անդամին սոցիալական անձնագրում ամրագրվում և տեղեկատվական բազայում մուտքագրվում է «հարգելի բացակա», եթե.

ա) ընտանիքի տվյալ անդամը «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված՝ ընտանիքի անդամ չհամարվող անձ է,

բ) տվյալ բնակության վայրում հաշվառված ընտանիքի բոլոր անդամներն են «բացակա» և սոցիալական անձնագիրը լրացվում է տվյալ բնակության վայրում փաստացի հիմունքներով հաշվառված և բնակվող ընտանիքի համար,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ գտնվում է հետախուզման մեջ.

դ) ընտանիքի անդամներից մեկի նախկին ամուսինն է, և առկա է ամուսնության դադարման իրավական հիմքը.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է ընտանիքի անդամների խնամակալ կամ հոգաբարձու.

զ) ընտանիքի «բացակա» անդամը 6 ամիս և ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայում է և դրա մասին ներկայացնում է համապատասխան փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելու մասին:».

բ. 7-րդ կետի 18)-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«18) ընտանիքի անապահովության միավորը որոշելիս ընտանիքի «հարգելի բացակա» անդամն ընտանիքի անդամ չի դիտարկվում.»:

2. Սահմանել, որ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի ղեկավարը մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-ը որոշման N1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված կարգով հաշվառված ընտանիքների մասին հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության մարզպետներին, Երևանի քաղաքապետին ու Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին ու Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին.

1) ապահովել որոշման N1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված կարգով հաշվառված ընտանիքների անդամների՝ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրենց բնակության վայրում հաշվառումը.

2) մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը որոշման N1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված կարգով հաշվառված ընտանիքների մասին տեղեկատություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» N 110-Ն որոշման հավելվածի 6.1-րդ կետի «ներկայացնելու օրը» բառերը փոխարինել «ներկայացնելու օր» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, դրա գործողությունը տարածվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը: